յայնմիկ՝ խոստացան և յանձն առին ընդ Հայոց 'ի միասին մտանել, եւ տուաւ գիր յայնժամ Հայոց 'ի դատարանէ ։ Եւ բաց յայսմանէ բացայայտ վկայեն դաշնագիրք Օմարայ և Սալահատտինի՝ և Կայսերական հրովարտակք Սէլիմայ, Սիւլէյմանայ և Մուրատայ, և վաւերական մուրհակք դատարանի, որք պահեալ կան յԵրուսաղէմ 'ի վանս Հայոց, որ չէր հնար հակառակ նոցին առնել ինչ ։ Այլ զի պատրիարքութիւնն Յունաց յԵրուսաղէմ է անփոփոխ և ընկեանս, իսկ կարգադրութիւն պատրիարքութեանն Հայոց խանգարեալ է 'ի բազում ժամանակաց հետէ, մինչեւ ցաւուրս իշխանութեան ձերոյ․ զի 'ի շրջանի միոյ կամ երկու տարւոյ լինէր փոփոխութիւն Պատրիարքաց, և նոցա զբաղեալ 'ի վէճս և 'ի կռիւս իւրեանց, անփոյթ արարեալ էին զկարգաց և զկանոնաց Երուսաղէմի, և 'ի չփոթութենէ աստի համարձակութիւն գտեալ Յունաց, անկան 'ի սնոտի տենչանս առաջնութեան, զի եւ 'ի ժամանակէ առաջին Թագաւորաց չէ ոք այժմ 'ի միջի, եւ ոչ ոք մնացեալ կենդանի, որք թոյլ ետուն Յունաց վարել հակառակ խոստմանց իւրեանց՝ և մուրհակացն Հայոց, յօդելով զպէսպէս պատճառանս, եւ պնդելով թէ՝ Հայք մինչեւ ցայսօր դիմեալ են Յունաց․ և թէ առաջնութիւնն է նոցա ։ Եւ թէ Հայք ոչ երբէք դադարեալ են 'ի խռովութենէ, եւ այսպիսի ստութեամբ առին հրովարտակ Արքունուստ ١١٠٧ (1696)․ և իբրեւ կամեցան վարել նովաւ ընդդէմ նախնի սովորութեանց, առիթ եղեն մեծի խռովութեան․ և 'ի դատաստանի յայտնի եղեւ նենգութիւնք նոցին առաջի օրինաւոր վկայից և բնակչաց քաղաքին․ և վաւերական մուրհակօք Հայոց խափանեցան խռովութիւնք նոցին, և տուաւ գիր Հայոց 'ի դատարանէ ։ Եւ զկնի միոյ տարւոյ՝ վերստին յարուցին զնոյն խռովութիւն, և դարձեալ մերժեցան ամբաստանութիւնք Յունաց 'ի դատարանի, և այսպէս մինչեւ ցայսօր անխափան մնացին սովորութիւնք երկուց ազգաց ։ Սակայն Յոյնք բնական նենգութեամբ իւրեանց զխափանեալ հրովարտակն զայն ետուն նորոգել օրինօք դատարանի 'ի թուին ١١٢٢ (1710)․ եւ թագուցին զայն մինչեւ ցայսօր․ զի դիտաւորութիւնք նոցին էին գտանիլ արձանագրութիւն հրովարտակին 'ի դիւանս․